ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2016 թվականի մարտի 2-ի թիվ 7/5 որոշման համաձայն իրականացվող վերահսկողության արդյունքում կազմված

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների և արտաբյուջետային միջոցների օգտագործման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունքների վերաբերյալ

Վերահսկողության նպատակը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների և արտաբյուջետային միջոցների օգտագործման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ ուսումնասիրություն:

Վերահսկողության առարկան՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների և արտաբյուջետային միջոցների, ինչպես նաև պետական սեփականության կառավարման օգտագործումը:

Վերահսկողության օբյեկտը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ:

Վերահսկողության ծավալը՝ 2015թ. հունվարի 1-ից մինչև վերահսկողության իրականացման ժամկետի ավարտը:

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 2016թ. մարտի 9-ից մինչև 2016թ. սեպտեմբերի 1-ը:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել է դիտարկման և վերլուծության ձևը: Դիտարկման փուլում իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամից ստացված տվյալների ուսումնասիրություն: Վերլուծության փուլում վերլուծվել և ամփոփվել են դիտարկման արդյունքները:

Վերահսկողության արդյունքները՝

ՀՀ կառավարության 27 նոյեմբերի 2014 թվականի թիվ 1407-Ն որոշմամբ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմավորվել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) և նույն որոշմամբ հաստատվել է համալսարանի կանոնադրությունը: Համալսարանի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է:

Համալսարանի հիմնական նպատակը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության, ինչպես նաև միջին մասնագիտական կրթության և հանրակրթության իրականացումն է:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կառուցվածքում գործում են՝ Համալսարանը, Հերացի ավագ դպրոցը, Հերացի թիվ 1 հիվանդանոցային համալիրը, Մուրացան հիվանդանոցային համալիրը՝ իրենց ենթակառուցվածքներով:

Համալսարանի 2015թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը (այսուհետ՝ նախահաշիվ) համալսարանի ռեկտորի և հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվել է 24.12.2014թ.:

2016թ. նախահաշիվը հաստատվել է 23.01.2016 թվականին:

Համալսարանի 2015թ. կարիքների համար գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների համար գնումների պլանը հաստատվել է 13.01.2015 թվականին, իսկ 2016թ. գնումների պլանը հաստատվել է 18.01.2016թ.:

Համալսարանի 2015թ. նախահաշվով ընդամենը մուտք է նախատեսվել (կրթություն և գիտություն, կլինիկաներ) 12,765.0 մլն դրամի չափով, փաստացի մուտքը կազմել է 13,146.3 մլն դրամ:

Ըստ 2015թ. ֆինանսական հոսքերի ընդամենը պետ. պատվերի շրջանակներում մուտքերը կազմել են 3,670.6 մլն դրամ, այդ թվում՝ կլինիկական աշխատանքների գծով՝ 2,254.2 մլն դրամ, կրթության գծով՝ 1,208.4 մլն դրամ և գիտության գծով՝ 208.0 մլն դրամ: Պետ. պատվերի շրջանակներում ստացված գումարների ծախսման ուղղությունները արտացոլվել են հաշվետվությունների տեսքով, որոնք ներկայացվել են համապատասխանաբար ՀՀ առողջապահության և ՀՀ կրթության և գիտության նախարարություններ:

Համալսարանի 2015թ. նախահաշվով նախատեսվել է ընդամենը (կրթություն և գիտություն, կլինիկաներ) 11,565.0 մլն դրամի ծախս, դրամարկղային ծախսը կազմել է 11,893.0 մլն դրամ:

Համալսարանի 2016թ. նախահաշվով ընդամենը մուտք է նախատեսվել (կրթություն և գիտություն, կլինիկաներ) 12,900.0 մլն դրամ:

2016 թվականի նախահաշվով նախատեսվել է ընդամենը 11,900.0 մլն դրամի ծախս:

Շինարարական աշխատանքների վերաբերյալ

Համալսարանը շենքի առանձին լսարանների, սան. հանգույցների և ջեռուցման համակարգերի ընթացիկ նորոգման և վերանորոգման համար 2015 թվականին ծախսել է 33.6 մլն դրամ (որի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 33.2 մլն դրամ), որից՝

ա) սեփական ուժերով կատարված աշխատանքների համար՝ 23.3 մլն դրամ

բ) այլ կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների համար՝ 10.3 մլն դրամ:

Շինարարական աշխատանքների մասով 2015 թվականին համալսարանը գնումներ է կազմակերպել ասֆալտապատման, կահույքի նախագծման և պատրաստման, հատակի լամինատի տեղադրման, մետաղական հովարի պատրաստման և տեղադրման աշխատանքների համար:

Շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ փոքրածավալ շինարարական աշխատանքների համար

ՀՀ օրենսդրությամբ նախագծային փաստաթղթեր և շինարարության թույլտվություն չի պահանջվում:
Պահանջվող շին. ընդունման ակտերի կազմում բացակայում են.

- թերությունների ակտերը,
- վերադարձվող նյութերի ակտերը (քանդման աշխատանքների արդյունքում առաջացած, օգտագործման համար պիտանի շինարարական նյութերի և սարքավորումների մասով),
- ծածկված աշխատանքների ակտերը,
- փորձարկումների ակտերը (ջեռուցման համակարգերի, օդափոխության, կոյուղու, ջրագծի, էլ.մոնտաժ. և էլ. սարքավորումների մասով),
- շինարարական նյութերի հավաստագրերը,
- օբյեկտի ավարտական ակտերը:

Արդյունքում խախտվել են.

ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.98թ. թիվ 44 «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ»-ի 5.2 կետի (հավելված 1-ի) պահանջները:

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման մասին» կարգի 7-րդ գլխի 138-րդ կետի պահանջը:

2015-2016թթ. գնումների գործընթացի և նախահաշիվների կազմման վերաբերյալ

2015 թվականի ծախսերի նախահաշվով նախատեսվել են հետևյալ ծախսերը.

- դեղորայք և բուժ. սարքավորումներ - 1,200.0 մլն դրամ,
- գույք ու սարքավորումներ - 210.0 մլն դրամ,
- գրասենյակային ու տնտեսական - 110.0 մլն դրամ,
- շինանյութ և ընթացիկ վերանորոգում - 230.0 մլն դրամ,

Ընդամենը՝ 1,750.0 մլն դրամ:

13.01.2015թ. համալսարանի ռեկտորի կողմից հաստատված 2015թ. կարիքների համար վերը նշված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների

համար գնումների պլանով 1,090.6 մլն դրամի ծախս է նախատեսվել: Այդ թվում՝ դեղորայք և բուժ. սարքավորումներ՝ 1,083.0 մլն դրամ, գույք և սարքավորումներ՝ 0,03 մլն դրամ, գրասենյակային և տնտեսական ծախսեր՝ 2.2 մլն դրամ, շինանյութ և ընթացիկ վերանորոգման ծախսեր՝ 5.3 մլն դրամ:

12.01.2016թ. հաստատված տարեկան վերջնական գնումների պլանով 2015թ. համար փաստացի ձեռք է բերվել 1,257.5 մլն դրամի ապրանքներ: Այդ թվում՝ դեղորայք և բուժ. սարքավորումներ 1,088.9 մլն դրամի, գույք և սարքավորումներ՝ 77.0 մլն. դրամի, գրասենյակային և տնտեսական ապրանքներ՝ 68.4 մլն. դրամի, շինանյութի և ընթացիկ վերանորոգման համար՝ 23.1 մլն. դրամի:

Տարեկան գնումների պլանը կազմվել է նախորդ տարվա ընթացքում կնքված պայմանագրերով 2015թ. տեղափոխված մնացորդ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների հիման վրա, ինչպես նաև 2015թ. հունվարի 13-ի դրությամբ համալսարանի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից 2015թ. կարիքների համար տրված զեկուցագրերի հիման վրա:

Ուսման վարձավճարի փոխհատուցման (զեղչերի) վերաբերյալ

2015-2016թթ. ուսումնական տարվա ընթացքում համալսարանի կողմից ուսման վճարի զեղչեր տրվել են 766 սովորողների, այդ թվում 162 կլինիկական օրդինատորի և 604 ուսանողի, որից ռեկտորի համաձայնությամբ ու համալսարանի ուսման վճարի փոխհատուցման հարցերի հանձնաժողովի որոշմամբ զեղչ է կիրառվել 9-ը ուսանողի նկատմամբ: Վերը նշված 766 սովորողների և նախորդ տարիներին կատարված, շարունակական ուսուցման գործընթացում ընդգրկված զեղչային համակարգում սովորողների հետ միասին (մոտ 900 ուսանող), համալսարանի կողմից զեղչերի գումարը (փոխհատուցումները) կազմել է ընդամենը 481.5 մլն դրամ:

2015թ. ընթացքում պետության կողմից արտոնյալ պայմաններում հայտնված սովորողների թիվը եղել է 27- ը, որոնց զեղչի գումարը կազմել է 31.0 մլն դրամ, իսկ սոց. անապահով, մասնակի փոխհատուցմամբ սովորողների թիվը կազմել է 96 ուսանող՝ 35.0 մլն դրամ գումարով:

Համալսարանի /նախկինում ՊՈԱԿ/ կողմից ստացված
վարկերի վերաբերյալ

Համալսարանի կողմից 2012-2015թթ. «Արդշինինվեստբանկ», «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» և «Արդշինբանկ» ՓԲԸ–ների հետ կնքվել են վարկային պայմանագրեր:

Ստորև աղյուսակի տեսքով ներկայացվում է վարկերի կնքման, մարման և տոկոսի վճարումները 01.07.2016թ. դրությամբ.

հազ.ԱՄՆ դոլար

Հ/Հ	Պայմանագրի կնքման տարեթիվը, համարը, և բանկի անվանումը	Մարման ժամկետը	Վարկի գումարը	Վարկի գումարի մարումները	Վարկի տոկոսի մարումներ
1	29.03.2012թ, A1110306Վ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ	29.03.2014թ.* 31.03.2015թ.	2,500.0	2,500.0	934.4
2	22.06.2012թ. A1110305Վ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ	23.06.2014թ. * 19.09.2015թ.	1,000.0	1,000.0	
3	09.07.2012թ. P1120704Վ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ	23.06.2014թ. * 09.07.2015թ.	1,000.0	1,000.0	
4	29.05.2013թ. GL 20130839 «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	29.05.2016թ.	1,500.0	1,500.0	326.6
5	02.06.2015թ. P1150506Վ «Արդշինբանկ» ՓԲԸ	02.06.2017թ.	2,500.0	-	160.6
Ընդամենը			8,500.0	6,000.0	1,421.6

* Մարման ժամկետները երկարաձգվել են:

Աղյուսակում ներառված առաջին երեք վարկերը համալսարանին տրամադրվել են ընթացիկ ծախսերի իրականացման և շրջանառու միջոցների ձեռք բերման նպատակով, իսկ վերջին երկուսը՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների հետ կապված ծախսերի իրականացման համար:

Համալսարանի հաշվարկային հաշիվների շարժի ուսումնասիրությամբ պարզվել է, որ թվով 5 բանկերում («Արդշինբանկ», «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան», «Հայբիզնեսբանկ», «Արարատբանկ», «Հայէկոնոմբանկ») հաշիվների

մնացորդների շարժը 01.08.2015թ. մինչև 31.12.2015թ. տատանվել է 261.9 մլն դրամից մինչև 1,221.6 մլն դրամի, իսկ 01.01.2016թ. մինչև 01.06.2016 թվականը՝ 797.4 մլն դրամից մինչև 947.6 մլն դրամի:

Միաժամանակ նշենք, որ վերը նշված կնքված վարկային պայմանագրերով ձևակերպված վարկերի ընդհանուր շարժը ուսումնասիրելուց պարզվել է, որ ձևակերպված վարկերի մարումները դեռ չիրականացված ներգրավվել են հաջորդ վարկերը և կատարվել են վարկերի տոկոսների մարումներ՝ ընդհանուր 1,421.6 հազ ԱՄՆ դոլար գումարով:

Այսպիսով, պետական սեփականության կառավարման և օգտագործման տեսանկյունից վերլուծելով համալսարանի ֆինանսական վիճակը, կարելի է փաստել. Փաստացի վարկային միջոցների ներգրավման ժամանակահատվածներում՝ 01.08.2015թ. մինչև 31.12.2015թ., 01.01.2016թ. մինչև 01.06.2016թ., համալսարանի բանկային հաշիվներին առկա են եղել համապատասխանաբար 261.9 մլն դրամից մինչև 1,221.6 մլն.դրամ, 797.4 մլն դրամից մինչև 947.6 մլն դրամ մնացորդներ: Միաժամանակ, համալսարանը նույն ժամանակահատվածում իր հաշվին իրականացրել է նաև հովանավորչական գործունեություն: Օրինակ՝ 78.0 մլն դրամ և 28.2 մլն դրամ հատկացրել է համապատասխանաբար Հայաստանի երիտասարդական հիմնադրամին և ուսանողական խորհրդարանին, 30.4 մլն դրամ ընդհանուր գումարով՝ տարբեր կազմակերպությունների տարբեր նպատակներով և այլն: Բացի վերոգրյալից, 2015թ. ընթացքում համալսարանում հանրակացարանային ծառայությունների դիմաց գանձվել (մուտքագրվել) է 158.0 մլն դրամ գումար, որից որոշակի գումարների հաշվին համալսարանին պատկանող չօգտագործվող շենք շինությունների վրա շինարարական կամ մոնտաժային աշխատանքների կատարման դեպքում ծախսերի արդյունավետության տեսանկյունից կարող էր տնտեսվել վարձակալության համար ծախսված շուրջ 34.2 մլն դրամը: Հաշվի առնելով վերը նկարագրվածը՝ կարելի է ենթադրել, որ Համալսարանը, իր ունեցած դրամական միջոցների առկայության պայմաններում, արդյունավետ կառավարման իրականացման դեպքում կարող էր խուսափել նոր վարկեր (02.06.2015թ. թիվ P1150506Վ վարկային պայմանագիր՝ 2,500.0 հազ. ԱՄՆ դոլար գումար) ներգրավելուց կամ գոնե ոչ այդքան մեծ ծավալի պարտավորություններ ստանձնելուց՝ դրանով իսկ զերծ մնալով հետագա տոկոսագումարների (լրացուցիչ ծախսերի) վճարումներից:

Եզրակացություններ

1. Համալսարանի շենք շինությունների ընթացիկ նորոգման՝ ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ փոքրածավալ շինարարական աշխատանքները իրականացվել են քաղաքաշինական նորմերի խախտումներով:

Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» կարգի 7-րդ գլխի 138-րդ կետի, ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.98թ. թիվ 44 «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ»-ի 5.2 կետի (հավելված 1-ի) պահանջները:

2. 2015թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվով նախատեսված ծախսային 4 հոդվածներով նախահաշիվը տարեկան հաստատված գնումների պլանից էականորեն շեղված է: Իսկ տարեվերջյան փաստացի գնումները էականորեն չեն համապատասխանում կազմված նախահաշվին և տարեսկզբին հաստատված գնումների պլանին:

3. Վարկային միջոցների ներգրավման ժամանակահատվածներում՝ 01.08.2015թ. մինչև 31.12.2015թ., 01.01.2016թ. մինչև 01.06.2016թ., համալսարանի բանկային հաշիվներին առկա են եղել համապատասխանաբար 261.9 մլն դրամից մինչև 1,221.6 մլն դրամ, 797.4 մլն դրամից մինչև 947.6 մլն դրամ մնացորդներ: Համալսարանը նույն ժամանակահատվածում իր հաշվին իրականացրել է այլ ծախսեր, այդ թվում՝ հովանավորչական գործունեության շրջանակում և այլն: Բացի վերոգրյալից 2015թ. ընթացքում համալսարանում հանրակացարանային ծառայությունների դիմաց գանձվել (մուտքագրվել) է 158.0 մլն դրամ գումար, որից որոշակի գումարների հաշվին համալսարանին պատկանող չօգտագործվող շենք շինությունների վրա շինարարական կամ մոնտաժային աշխատանքների կատարման դեպքում ծախսերի արդյունավետության տեսանկյունից կարող էր տնտեսվել վարձակալության համար ծախսված շուրջ 34.2 մլն դրամը:

Առաջարկություններ

ՀՀ կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին՝

1. Այսուհետ առաջնորդվել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» կարգի 7-րդ գլխի 138-րդ կետի, ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.98թ. թիվ 44 «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ»-ի 5.2 կետի (հավելված 1-ի) պահանջներով:
2. Այսուհետ տարեկան գնումների պլանը կազմել հաշվի առնելով առանձին ստորաբաժանումների կարիքների համար գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների պահանջարկը, այնուհետ այն արտացոլել տարեկան նախահաշվում:
3. Պետական սեփականության կառավարման և օգտագործման տեսանկյունից վերլուծել համալսարանի ֆինանսական վիճակը, և արդյունավետ կառավարման իրականացման պայմաններում, քննարկել նոր վարկեր ներգրավելու կամ գոնե ոչ այդքան մեծ ծավալի պարտավորություններ ստանձնելու հարցը՝ խուսափելով հետագա տոկոսագումարների (լրացուցիչ ծախսերի) վճարումներից: